



Թեստ՝ տարրական աստիճանի ուսուցիչների համար

Բնագիտություն

Հրահանգ

Ձեր առջև քննական թեստի էլեկտրոնային բուկլետն է:

Թեստը բաղկացած է երկու մասից՝ մասնագիտական գիտելիք և ակադեմիական ունակություններ:

Թեստի առավելագույն միավորն է 53:

Ուշադրությամբ ծանոթացեք թեստի յուրաքանչյուր առաջադրանքի հրահանգին, լավ ըմբռնեք առաջադրանքի պահանջը և դրանից հետո սկսեք աշխատանքը: Թեստի վրա աշխատելիս՝ կիրառեք կցված քարտեզները:

Ի նկատի ունեցեք.

- Եթե ճիշտ պատասխանի հետ միասին նշեք նաև ոչճիշտ պատասխանը, միավոր չեք ստանա:

Թեստի վրա աշխատանքի համար տրվում է 4 ժամ:

Ցանկանում ենք հաջողություն:



Յուրաքանչյուր առաջադրանքի համարի առջև՝ փակագծերում ցույց է տրված առաջադրանքի միավորը:

➤ *Հարց ընտրովի պատասխաններով՝ առաջադրանք № 1-18, 24-29, 34-38:*

Հրահանգ

Յուրաքանչյուր հարցին տրված է չորս ենթադրական պատասխան: Դրանցից միայն մեկն է ճիշտ: Ընտրած պատասխանը տեղափոխե՛ք պատասխանների թերթի վրա հետևյալ կերպ՝ պատասխանների համապատասխան վանդակում դրեք X նշանը: Ոչ մի այլ նշում, հորիզոնական կամ ուղղահայաց գծեր, շրջագծումներ և այլն, չի ընկալվի էլեկտրոնային ծրագրի կողմից: Եթե ցանկանում եք ուղղել պատասխանների թերթում նշած պատասխանը, ամբողջությամբ գունավորե՛ք վանդակը, որտեղ դրել եք X նշանը և այնուհետև նշե՛ք պատասխանի նոր տարբերակը (դրեք X նշանը նոր վանդակում): Կրկին անգամ ընտրել այն պատասխանը, որն արդեն ուղղել եք, հնարավոր չէ: Յուրաքանչյուր առաջադրանք գնահատվում է 1 միավոր:

➤ *Համապատասխանության սահմանում՝ առաջադրանք № 30-31:*

Հրահանգ

Որոշե՛ք համապատասխանությունը առաջադրանքում տրված երկու թվարկացանկի միջև: Պատասխանը գրառե՛ք պատասխանների թերթի տրված աղյուսակում: Յուրաքանչյուր տառի տակ գրե՛ք համապատասխան թվանշանը: Առաջադրանքի առավելագույն միավորն է՝ 1:

➤ *Տեղեկատվության վերլուծություն՝ առաջադրանք 19-23, 32, 33, 39:*

Հրահանգ

Ուշադիր ծանոթացե՛ք տրված տեղեկատվությանը (լուսանկար, աղյուսակ, գրաֆիկ և այլն) և պատասխանե՛ք հարցերին: Պատասխանը գրառե՛ք պատասխանների թերթի համապատասխան տեղում: Միավորների քանակը սահմանվում է ըստ կոնկրետ առաջադրանքի:

Առարկայական գիտելիք

(1) 1. Ո՞ր հատկանիշներն են բնորոշ կենդանի բնությանը:

I – Ածխաթթու գազի արտազատում,

II – շարժում,

III – էներգիայի ընդունում և փոխակերպում:

ա) Միայն I և II, Ն) միայն I և III, Շ) միայն II և III, Ը) I, II և III:

(1) 2. Ի՞նչ կենսաբանական նշանակություն ունի անսեռ բազմացումը:

I – Նպաստում է նոր տարածքում առանձնյակների վերաբնակեցմանը,

II – առաջ է բերում առանձնյակների թվաքանակի արագ աճ,

III – նպաստում է ծնողներից տարբերվող առանձնյակների առաջացմանը:

Տ) Միայն I և II, Յ) միայն I և III, Շ) միայն II և III, Ը) I, II և III:

(1) 3. Ո՞ր միաբջիջ օրգանիզմն է բազմանում բողբոջմամբ:

ա) Ամեռբան, ծ) խմորասունկը, ը) Էվգլենան, լ) հողաթափիկը:

(1) 4. Ո՞ր լատինական տառով նշված կենդանին է բազմանում ձվադրությամբ:



A



B



C



D

ա) A,

բ) B,

գ) C,

դ) D:

(1) 5. Ո՞ր օրգանիզմն է սկսում զարգանալ սպորից:


ճ) Կաղնին, Ն) Էղևնին, Շ) սունկը, Ը) սոճին:

(1) 6. Ո՞րը չի հանդիսանում ստորգետնյա ձևափոխված ցողուն:

ա) Կոճղարմատը, ծ) պալարը, ը) արմատապտուղը, լ) սոխուկը(կոճղեզ):

(1) 7. Առաջնորդվե՛ք սխեմայով և որոշե՛ք, որ լատինական տառով նշված մասում են առաջանում սեռական բջիջներ:

- ա) Միայն A,
- ծ) միայն B,
- ճ) B և C,
- դ) C և D:



(1) 8. Թվարկածներից ո՞ր մակարույծերն ունեն միջանկյալ հյուրընկալ (տեր):

1. Խոզի երիզորդը, 2. Էխինոկոկը, 3. ասկարիդը, 4. սրատուտ:

ա) 1 և 2, ծ) 1 և 3, ը) 2 և 3, Ս) 2 և 4:

(1) 9. Առավել շատ ո՞ր օրգաններին է վնասում ալկոհոլը:

ա) Ստամոքսին և աղիներին,

ծ) լյարդին և գլխուղեղին,

գ) ողնուղեղին և սրտին,

զ) թոքերին և մկաններին:

(1) 10. Գրիպի և կովիդի տարածումը տեղի է ունենում.

ա) օդակաթիլային ճանապարհով,

ծ) մակարույծ միջատներով,

գ) չլվացած մրգով,

զ) ջրի միջոցով:

(1) 11. Արտադրողների կողմից առաջացած նյութերը և դրանցում կուտակված էներգիան առավել քիչ քանակությամբ ընդունում են.

ա) նապաստակը և եղնիկը

ծ) գայլը և աղվեսը,

զ) արծիվը և անգղը,

զ) բորբոսասունկը և նեխման բակտերիան:

(1) 12. Ըստ նկարի որոշե՛ք, կմախքի ո՞ր լատինական տառով նշված մասում չի հանդիպում ոսկրերի շարժուն միացում:




A



B



C



D

- ա) A,
- ბ) B,
- გ) C,
- დ) D:

(1) 13. Նկարի վրա պատկերված խորանարդներից ամենամեծ խտությունն ունի.


ա) I խորանարդը,

ծ) II խորանարդը,

ճ) III խորանարդը,

զ) երեք խորանարդների խտությունը

միանման է :





(1) 14. Նկարի վրա պատկերված գրաֆիկներից n° ըը կարող է լինել t ժամանակում անցած s հեռավորության t ժամանակից կախվածության գրաֆիկ:

ա) Երկուսն էլ,

ծ) ոչ մեկը,


ճ) միայն 1,

դ) միայն 2:



(1) 15. Տաք ջուրը լցրեցին կաթսայի մեջ և փակեցին թափանցիկ կափարիչով: Շուտով կափարիչի վրա ներսից հայտնվեցին ջրի կաթիլներ(դիտ. նկ.): Ո՞ր գործընթացը (գործընթացները) առաջ բերեց կաթիլների հայտնվելը:

- ա) Հալումը և կոնդենսացիան,
- բ) միայն գոլորշիացումը,
- գ) միայն կոնդենսացիան,
- դ) գոլորշիացումը և կոնդենսացիան:



(1) 16. Տրվածներից ո՞րն է մաքուր նյութ և ոչ՝ նյութերի խառնուրդ:

ա) Աղբյուրի ջուրը,

ծ) գինին,

գ) սնդիկը,

զ) կաթը:

(1) 17. Տրված պնդումներից ո՞րն է ճիշտ նկարագրում ածուխի այրման գործընթացը:

I. Այդ ժամանակ անջատվում է էներգիա,

II. այդ ժամանակ ածխածնից և թթվածնից առաջանում է ածխաթթու գազ,

III. այդ ժամանակ ածխածինը քայքայվում է և արտազատվում է գազ:

ճ) Միայն I,

Ն) ինչպես I, այնպես էլ II,


Զ) ինչպես I, այնպես էլ III,

Թ) երեքն էլ:

(1) 18. Երկու ամանների մեջ լցրեցին սենյակային ջերմաստիճանի ջուր: Առաջինը տաքացրին, իսկ երկրորդը սառեցրին: Ինչպե՞ս կփոխվի ջրի ծավալը յուրաքանչյուր ամանում:

- ա) Առաջինում՝ կմեծանա, երկրորդում՝ կնվազի,
- բ) առաջինում՝ կնվազի, երկրորդում՝ կմեծանա,
- գ) երկուսում էլ՝ կնվազի,
- դ) երկուսում էլ՝ կմեծանա:


(1) 19. Որոշե՛ք, ո՞ր լատինական տառերով նշված բույսերին են փոշոտում միջատները:




(1) 20. Նկարի վրա պատկերված է լիտոպս բույսը, որին անվանում են նաև «կենդանի քար»: Այն ունի երկու հյութալի տերևներ և կարճ ցողուն: Ո՞ր աբիոտիկ (ոչ կենսածին) գործոնի բացասական ազդեցությանն է հարմարվել բույսը:




(1) 21. Առաջնորդվե՛ք սննդային շղթայի սխեմայով և որոշե՛ք, ո՞ր լատինական տառով է նշված երկրորդ կարգի սպառողը:



(1) 22. Առաջնորդվե՛ք սխեմայով և որոշե՛ք բուրգի ո՞ր աստիճանի վրա է գտնվում B լատինական տառով նշված տեսակը:



(3) 23. Նկարի վրա տրված օրգանիզմները (1. կաղնի, 2. թրթուր, 3. երաշտահավ, 4. սակո, 5. աբեթասունկ, 6 և 7 նապաստակներ) անտառի էկոհամակարգում միմյանց հետ հաստատում են բիոտիկ (կենսաձին) փոխհարաբերություններ: Ներկայացված տեղեկատվության կիրառմամբ, զույգավորված թվանշանների երկայնքով գրե՛ք օրգանիզմների միջև առկա բիոտիկ (կենսաձին) փոխհարաբերության ձևը:



23.1	1 և 5	
23.2	3 և 4	
23.3	2 և 6	

(1) 24. Ո՞ր մասշտաբի քարտեզի վրա է աշխարհագրական տեղեկատվությունը առավել մանրամասնորեն պատկերված:

Տ) 1: 25 000

Ծ) 1: 200 000

Ձ) 1: 1 000 000

Թ) 1: 35 000 000

(1) 25. Թվարկածներից ո՞րն է առավել կարճ գուգահեռականը:

ա) 10° -ը

ბ) 40° -ը

գ) 60° -ը

դ) 80° -ը

(1) 26. Թվարկածներից ո՞րն է ծայրամասային ծով:

ա) Էգեյանը,

ბ) Ուեդդելին,

գ) Կարմիրը,

դ) Բալթիկը:

(1) 27. Թվարկածներից ո՞ր գետի գետաբերանն է գտնվում իր ակունքից հարավ-արևմտյան ուղղությամբ:


ա) Նեղոսի,

ծ) Ամազոնի,

գ) Դանուբի,

զ) Դառլինգի:

(1) 28. Թվարկած առաջադրանքներից որի՞ կատարումն է հնարավոր քարտեզի հատվածի վրա տրված տեղեկատվության համաձայն:



Տ) Քամահար անտառ Ծ) Նոսր անտառ

Տ) Ծառահատված անտառ
Ծ) Այրված և արմատախիլ ծառեր

ԽճՏՊ Խառը անտառ

Մրգատու այգի

Փայտե կամուրջ
Երկաթե կամուրջ

Ջրհոր
Աղբյուր

- ա) Քանոնի կիրառմամբ չափե՛ք և հաշվե՛ք քանի՞ կիլոմետր հեռավորություն է Դիդի Տբորի (ԾՃՐ) և փայտե կամրջի միջև,
- բ) նկարագրե՛ք տեղանքի լանդշաֆտը, որը ճանապարհի արևելյան մասի ընդարձակ մրգատու այգիներից հյուսիս-արևելք է գտնվում,
- գ) որոշե՛ք Փոքր Տբորիից (ԾՃՐ) ի՞նչ ուղղության վրա է գտնվում խառը անտառը,
- դ) Անվանե՛ք բոլոր այն ծառատեսակները, որոնք տարածված են քարտեզի վրա տրված տարածքի սահմաններում:

(1) 29. Թվարկաճներից ո՞ր անտառում է զարգանում առավել շատ շարահարկ (բազմաշարահարկ անտառ):

ս) Միբիրյան տայգայում,

ծ) Խառը անտառում,

ճ) Ամազոնի սելվայում,

Պ) արիդյան(չոր) լուսավոր անտառում:

(1) 30. Սահմանեք համապատասխանություն (Հաշվի առեք, որ պատասխանի կրկնությունը հնարավոր չէ).

Պահպանված լանդշաֆտի լուսանկար

ա)



ծ)



ժ)



ը)



ը)



չ)



Պահպանված տարածքի անվանում

1

2

3

4

5

6

7

Իմերեթիի քարանձավներ

Վաշլոփանի

Ջավախեթի

Լագոդեխի

Թուշեթի

Կոլխեթի

Փշավ-Խեվսուրեթի

(1) 31. Սահմանեք համապատասխանություն (Հաշվի առեք, որ պատասխանի կրկնությունը հնարավոր).

Բույսի լուսանկար

ա)



Լոլիկ

ծ)



Սուրճ

ժ)



Կակաո

Ճ)



Ցորեն

դ)



Եգիպտացորեն

Յ)



Խաղողի վազ

Ծագման վայրը

1

Ամերիկա

2

Եվրասիա


3

Աֆրիկա


4

Ավստրալիա

(2) 32. Ըստ նկարի որոշե՛ք, տարվա ո՞ր սեզոնն է (ժամանակն է) հարավային կիսագնդում:
Բացատրե՛ք, ինչպե՞ս որոշեցիք այս հանգամանքը:



(4) 33. Վերլուծե՛ք նկարը և պատասխանե՛ք հարցերին.



(2) 33.1. Ինչպե՞ս են անվանում I նկարի վրա սլաքներով ցույց տրված Լուսնի մակերևույթի վրա գոյություն ունեցող գոյացությունները և ինչպիսի՞ն է դրանց ծագումը:

(1) 33.2. Ինչպե՞ս է կոչվում Արեգակնային համակարգի տիեզերական տարածությունը, որը II նկարի վրա ցույց է տրված սլաքներով :

(1) 33.3. Արեգակնային համակարգի ո՞ր մոլորակային համակարգն է պատկերված III նկարի վրա:

Ակադեմիական հատուչություններ

Ընթերցած տեքստի վերախմաստավորում

Ուշադրությամբ ընթերցե՛ք և իմաստավորե՛ք տեքստը: Յուրաքանչյուր հարցի ենթադրական պատասխաններից ընտրե՛ք այն տարբերակը, որը ճիշտ է՝ տրված տեքստի համաձայն:

Այս կամ այն հարցին ծանոթանալուց հետո, դրան պատասխանելու համար, հնարավոր է հարկ լինի վերադառնալ տեքստին, համապատասխան հատվածը նորից ընթերցել և կրկին անցնել հարցին: Դա կհեշտացնի ինչպես տեքստի, այնպես էլ յուրաքանչյուր հարցի վերջում տրված համապատասխան նշումների վրա «սեղմումը»:

Սոցիալական պատասխանատվությունը ենթադրում է այլոց վրա մեր արարքների ազդեցության ընկալում, իմբի շահերի նկատառում - պատասխանատվության ստանձնում՝ ուրիշների բարօրության մասին և օրենքների պաշտպանություն՝ ընդհանուր բարության համար: Սոցիալական պատասխանատվությանը աջակցությունը կարող է բանալի լինի դպրոցում երեխաների ազրեսիան և ճնշումը նվազեցնելու համար: Թեև սոցիալական պատասխանատվությունը երեխաների մոտ ինքնըստինքյան չի զարգանում, դրա ձևավորումը ծնողների և ուսուցիչների կողմից նշանակալից ջանքեր է պահանջում: Երեխաների մոտ ուրիշի ապագայի նկատառումը, թե անվտանգ, կանխագուշակելի միջավայրի ստեղծան մասին հոգատարության ուսուցումը հնարավորություն կտա նրանց յուրացնելու սոցիալական պատասխանատվության արժեքը:

Գոյություն ունի կարծիք, որ կանոնները կատարելու խիստ վերահսկողությունը կրճատում է ազրեսիան դպրոցներում: Նման մոտեցման շրջանակներում վիճաբանությունները դպրոցի ղեկավարների ձեռքում են և երեխայի վարքը վախով է կառավարվում: Դրան հակառակ, եթե ուսուցիչները օժանդակում են երեխաների մոտ էմոցիաների կառավարման և կոնֆլիկտների (հիմնախնդիրների) կարգավորման ունակությունների զարգացմանը, իսկ դպրոցը հոգում է այն մասին, որ երեխաները դպրոցի հետ կապի զգացում ունենան, նրանք մոտիվացված են հոգալու ընդհանուր բարության մասին: Նման դեպքում երեխաները դառնում են գլխավոր գործող անձինք, որպես դրական փոփոխությունների ստեղծողներ:

Սոցիալական պատասխանատվության ձևավորմանը աջակցող կարևոր մեխանիզմներից մեկը ուրիշներին օգնելու վարքի մոդելավորումն է: Դպրոց մտնելու հետ մեկտեղ երեխայի սոցիալական մոդելների շրջանը ընդարձակվում է: Հետազոտությունների համաձայն, այն երեխաները, որոնց ծնողները և ուսուցիչները ակտիվորեն են մասնակցում հասարակությանը բարություն բերող ակտիվություններին, իրենք էլ աչքի են ընկնում ուրիշներին աջակցության, կարեկցության ունակություններով: Ոչ պակաս կարևոր է երեխաների հետ ամենօրյա հարաբերությունում արժեքների մասին հստակ ծանուցումների, ազդակների մատուցումը: Երեխաների իրազեկումը այլ մարդկանց կարիքների մասին նման ծանուցումներից, ազդակներից մեկն է: Նաև կարևոր է երեխային այն բանի բացատրությունը, թե ինչ ազդեցություն է գործում նրա վարքը համադասարանցիների վրա: Անհրաժեշտության դեպքում օգնություն որոնելու գործում աջակցությունը նույնպես զարգացնում է սոցիալական պատասխանատվությունը: Հաճախ երեխաների մոտ ոչ էլ առաջանում է միտք այն մասին, որ օգնություն խնդրեն, երբ իրենց լավ չեն զգում: Եթե մղենք օգնություն որոնելու կողմը, նրանց մոտ նույնպես կառաջանա ուրիշներին օգնելու մոտիվացիա: Արժեքավոր առաքումները հնարավոր է նույն հաջողությամբ վերածվեն սոցիալական պատասխանատվության զարգացման խոչընդոտման, եթե դպրոցը առանձնահատուկ շեշտադրությունը կատարում է մրցակցության և աշակերտների անհատական ձեռքբերումների վրա արդարացիությունը և ուրիշների նկատմամբ հոգատարությունը անտեսելու հաշվին: Դրա հետ միասին սոցիալական պատասխանատվությունը առանց արարքների չի ձևավորվում՝ կարևոր է երեխան ունենա հնարավորություն ինքը մասնակցելու ուրիշների համար բարություն բերող գործունեությունում:

Եթե դպրոցը գործում է որպես մինի-ինստիտուտ, որում երեխաները սովորում են խմբային աշխատանք, փոխաջակցություն, հասկանում են ինչ է նշանակում հասարակության անդամ լինելը, այդպիսի ինստիտուտի «շրջանավարտը» մեծ հավանականությամբ կձգտի սեփական ցանկությունների խորքը «վերանայել» և նրա մոտ նվազ չափով կառաջանա ուրիշին ճնշելու ցանկություն:

(1) **34.** Առաջին պարբերությունում կարդում ենք. «Սոցիալական պատասխանատվությանը աջակցությունը կարող է բանալի լինի դպրոցում երեխաների ազրեսիան և ճնշումը նվազեցնելու համար»: Ստորև թվարկածներից ո՞րն է «բուլոբից ավելի հաստատում» այս կարծիքը:

- Տ) Սոցիալական պատասխանատվությունը ենթադրում է այլոց վրա մեր արարքների ունեցած ազդեցության ընկալում, պատասխանատվության ստանձնում՝ ուրիշների բարօրության մասին,
- Ծ) սոցիալական պատասխանատվության ձևավորումը ծնողների և ուսուցիչների կողմից նշանակալից ջանքեր է պահանջում,
- Ճ) սոցիալական պատասխանատվությունը երեխաներին մոտ ինքնըստինքյան չի զարգանում, կանոնները պաշտպանելու ունակության զարգացումը դպրոցի կարևոր խնդիրն է,
- Թ) կանխատեսելի միջավայրի ստեղծման մասին հոգատարության ուսուցումը երեխաներին հնարավորություն կտա յուրացնելու սոցիալական պատասխանատվության արժեքը:

[Վերադարձ տեքստի I էջին](#)

[Վերադարձ տեքստի II էջին](#)

(1) 35. Ստորև թվարկածներից ո՞րն է երկրորդ պարբերության հիման վրա կայացրած արդարացի եզրակացությունը:

Դպրոցներում ազրեսիայի կրճատման լավագույն ուղին

- ա) կանոնները կատարելու խիստ վերահսկումն է, քանզի երեխաների վարքը միայն վախով է կառավարվում,
- ծ) դպրոցի ղեկավարների կողմից վիճաբանություններն իրենց ձեռքը վերցնելն է, քանզի երեխաների մոտ դպրոցի հետ կապի զգացումը այսպես ավելի լավ է ձևավորվում,
- ց) դպրոցական կյանքում երեխաներին որպես գլխավոր գործող անձ դարձնելն է, քանզի այդ ճանապարհով նրանք գիտակցում են ընդհանուր բարության մասին հոգատարության պատասխանատվությունը,
- ճ) երեխաների մոտիվացումն է կառավարել սեփական էմոցիաները, քանզի այդպես ավելի լավ կկարգավորեն կոնֆլիկտները (հիմնախնդիրները):

[Վերադարձ տեքստի I էջին](#)

[Վերադարձ տեքստի II էջին](#)

(1) 36. Դպրոցներից մեկում արմատավորված է պրակտիկա, որի շրջանակներում բարձրդասարանցիները մինչև ուսումնական տարվա սկսվելը, առաջինդասարանցիներին ուղեկցում են դպրոցին ծանոթանալու գործում. ցույց են տալիս դասասենյակները, ծանոթացնում են ուսուցիչների հետ, նրանց հետ միասին կատարում են այն գործունեությունը, աշխատանքը, որոնք առաջինդասարանցիները պետք է կատարեն ուսումնառությունը սկսելուց հետո:

Մոցիալական պատասխանատվության ձևավորմանը նպաստող ո՞ր մեխանիզմի պատկերագրման օրինակ կարող է ամենանվազ չափով պիտանի լինել նկարագրված դեպքը:

ս) Ուրիշներին օգնության վարքի մոդելավորում,

ծ) երեխաների իրազեկում այլ մարդկանց կարիքների մասին,

ժ) ուրիշներին բարություն բերող գործունեությանը մասնակցություն,

զ) երեխաներին այն բանի բացատրություն, թե ինչ ազդեցություն է գործում նրա վարքը համադասարանցիների վրա:

[Վերադարձ տեքստի I էջին](#)

[Վերադարձ տեքստի II էջին](#)

(1) 37. Ի՞նչ դեպքում կարող է արժեքավոր առաքումը վերածվել սոցիալական պատասխանատվության զարգացման խոչընդոտման:

ս) Եթե դպրոցում մրցակցային միջավայր է, երեխաները իրենց զգում են անարդարացիորեն ճնշվածներ,

ծ) եթե դպրոցը խրախուսում է աշակերտների միայն անհատական ձեռքբերումները, երեխան չի սովորում ուրիշներին նկատի առնել և հոգատար լինել,

ց) եթե դպրոցում արադարացիության սկզբունքը պահպանված չէ, երեխաների մոտ չի առաջանում անհրաժեշտության դեպքում օգնություն խնդրելու մոտիվացիա,

զ) եթե դպրոցում ընդհանուր արժեքները անտեսված են, երեխաներին ընդհանուր գործունեությունում, աշխատանքներում մասնակցության հնարավորություն չի տրվում:

[Վերադարձ տեքստի I էջին](#)

[Վերադարձ տեքստի II էջին](#)

(1) 38. Արտահայտությունը՝ «Սեփական ցանկությունների խորքը «վերանայել» - ենթադրում է.

ս) սեփական ցանկությունների պատճառների գիտակցում,

ծ) ուրիշների կարիքների նկատառում,

ց) սեփական կարիքների անտեսում,

ճ) ուրիշների ցանկությունների գերադասում (առաջնային համարել):

[Վերադարձ տեքստի I էջին](#)

[Վերադարձ տեքստի II էջին](#)

(9) 39. Վերլուծական գիր



Հատված հոդվածից.

«Ժամանակակից զարգացած երկրների Սահմանադրությունները, այլ հիմնական իրավունքների շրջանում, անպայմանորեն ընդգծում են մարդկանց իրավահասարությունը: Թեև, բավականին հաճախ հոչակազրված արժեքները մնում են թղթի վրա և կենցաղային ենթատեքստում հանդիպում ենք որոշակի կարծրատիպերով պայմանավորված անհավասարության և խտրականության նշաններ»:

Իմաստավորե՛ք պատկերները, հոդվածից հատվածը և դատեցե՛ք.

- Ի՞նչ հիմնախնդիր է պարզվում տրված առաջադրանքում:
- Ի՞նչով է պայմանավորված այս հիմնախնդրի առաջացումը հասարակությունում:
- Ի՞նչ արդյունք է բերում նշված հիմնախնդիրը և ինչպե՞ս պետք է արմատախիլ արվի այն: Ընդհանրացրե՛ք ասելիքը:

*Դատողության ամրապնդման համար բերեք փաստարկներ և օրինակներ:
Ձեր կողմից գրված շարադրանքը պետք է պարունակի առնվազն 120 բառ:*